

## ՌԱՄԱ մարզչական ծրագիր Հայաստանի ՌԱՄԱ փորձագետների և ցուցադրական ձեռնարկությունների համար

### I. Նպատակը և ընդհանուր ոլորտը

ՌԱՄԱ իրականացման վերաբերյալ մարզչական ծրագիրը մշակվել է «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագրի շրջանակներում: **Մարզչական ծրագրի** ընդհանուր նպատակը փորձագետների շրջանում ՌԱՄԱ մեթոդաբանության և գործելակերպի կարողությունների ընդլայնումն է և դրա իրականացման ցուցադրումը 15 ձեռնարկություններում: ՌԱՄԱ-ի վերաբերյալ մարզչական գործընթացով, ծրագիրը կներգրավի ՌԱՄԱ փորձագետների և ցուցադրական ձեռնարկությունների անձնակազմերի, որպեսզի աջակցի նրանց ՌԱՄԱ գնահատումներն իրականացնելիս և ՌԱՄԱ գործողությունների պլանները մշակելիս, ինչը ձեռնարկություններին կտանի դեպի արդյունավետության բարելավմանն շրջակա միջավայրի բարեկեցության ամրապնդման:

ԱԻԳ-ը (Ազգային իրականացնող գործընկերը՝ Կովկասի Տարածաշրջանային բնապահպանական կենտրոնը) ՌԱՄԱ փորձագետներին ընկերություններում գնահատումների ընթացքում կտրամադրի դասընթացներ ՌԱՄԱ մեթոդաբանության և տեխնիկայի վերաբերյալ, ինչպես նաև կդեկավարի ընդհանուր պլանավորումը, համակարգումը և զեկույցների տրամադրումը: Երկու ԱԻԳ Տեխնիկական փորձագետները մասնագիտացված առարկաների վերաբերյալ կտրամադրեն տեխնիկական խորհրդատվություն ՌԱՄԱ փորձագետներին/ձեռնարկություններին՝ ապահովելով էներգաարդյունավետության և ոլորտային փորձաքննության համադրությունը:

Ծրագիրը նախատեսում է օժանդակության 2 մակարդակ.

- **Մարզչական ծրագիր ՌԱՄԱ փորձագետների համար.** Այն կազմված կլինի վերապատրաստման դասընթացներից և ԱԻԳ - ի տեխնիկական խորհրդատուների կողմից կշարունակվի աջակցությունը ձեռնարկություններում գնահատումներ իրականացնելու ընթացքում: Դասընթացը կբաժանվի 4 կեսօրյա հանդիպումների՝ երեք մոդուլ մեկ հանդիպման ընթացքում: Դասերը կհարստանան նաև Հայաստանում ՌԱՄԱ-ի հետ կապված փորձառություններով և դեպքերի ուսումնասիրություններով (լուսաբանելով էներգաարդյունավետությունը, թափոնները, վերամշակումը, ջրօգտագործումը, շրջակա միջավայրի կառավարման համակարգերը (ՇՄԿՀ)):
- **Մարզչական ծրագրի ցուցադրական ձեռնարկությունների համար.** Այն կազմված կլինի մի քանի հանդիպումներից՝ յուրաքանչյուր ձեռնարկությունում, որը կկազմակերպվի ՌԱՄԱ փորձագետների կողմից: Այդ դասերը կընդմիջվեն ներգործարանային այցերով տվյալների հավաքագրմամբ և վերլուծությամբ:

Մարզչական դասընթացի հիմնական բովանդակությունը (թեմաների ցանկը) հղման համար նկարագրվում է IV գլխում: ՌԱՄԱ մեթոդաբանության թեմաները կտրվեն ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության ՄԱ (Մաքուր արտադրության) գործիքատուփի ընդհանուր կառուցվածքին համապատասխան (ինչպես սահմանված է Տեխնիկական առաջադրանքում), և կհարստացվի ԱԻԳ-ի փորձով, ինչպես նաև ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության միջազգային փորձագետների կողմից «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» համար մշակված և թարմացված վերապատրաստման նյութերով:

Բացի այդ, ԱԻԳ - ը կորոշի ՌԱՄԱ-ի երեք առաջադեմ թեմաներ (առնվազն 3 բնագավառում)՝ լրացնելով ներկայացված ցուցակը՝ պահպանելով որակյալ գնահատումների համար անհրաժեշտ բովանդակության պատշաճ հավասարակշռությունը: Մարզչական ծրագրի վերջնական ձևավորումը կաջակցվի ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության միջազգային փորձագետների կողմից և կներկայացվի ԱԻԳ խորհրդատուների և ՌԱՄԱ փորձագետների կողմից:

## II. Մարզչական ծրագրի նկարագիրը

Մարզչական ծրագրի համար հիմք կհանդիսանան ՌԱՄԱ-ի վերաբերյալ առկա գիտելիքները՝ ներգրավելով նաև միջազգային լավագույն փորձը, որը կօգտագործվի և կհարմարեցվի տեղական համատեքստին: ԱԻԳ թիմը կորոշի նաև ՌԱՄԱ առաջադեմ թեմաները՝ ըստ ՌԱՄԱ գնահատման գործընթացում ներգրավված տեղական փորձագետների և ՓՄՁ-ների ընտրված կարիքների: Ծրագիրը կձևավորվի ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության միջազգային փորձագետների (անգլերեն լեզու) և ԱԻԳ խորհրդատուների (մատուցվում է ազգային լեզվով) համագործակցությամբ, այն կհաստատվի ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության կողմից և կիրականացվի տեղական փորձագետների հետ՝ ըստ աշխատանքային ծրագրի ժամանակացույցի: Մարզում-դասընթացները հետագայում կիրականացվեն ԱԻԳ փորձագետների կողմից, որոնք կօգնեն ՓՄՁ-ներին յուրաքանչյուր ՓՄՁ-ի համար ՌԱՄԱ տարբերակների բացահայտման, գործողությունների պլանի և ռեսուրսների արդյունավետությանն ուղղված առաջնահերթությունների մշակման, ինչպես նաև աուդիտ առաջարկությունների իրականացման հարցում: ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության ՌԱՄԱ դասընթացների նյութերը կօգտագործվեն որպես տեղեկատվական նյութ այս առաջադրանքի համար: Թիմը կհարստացնի նյութը ազգային գործարար օրինակներով և 2017-ին մշակված Կանաչ Ակումբների Արագ գնահատման կատալոգով՝ հիմնված միջազգային մարզչական թիմի առաջարկությունների վրա:

ՌԱՄԱ գնահատումների վերջնական արդյունքը կլինի ՌԱՄԱ խնայողական կատալոգը յուրաքանչյուր ընկերության համար՝ մշակված վերլուծության, ՌԱՄԱ գործողությունների և մոնիտորինգի պլանների աջակցությամբ: Ամբողջ այս տեղեկատվությունը յուրաքանչյուր ընկերության համար կփաստագրվի ներգործարանային գնահատման ամբողջական հաշվետվությունում: Խնայողական կատալոգը կպարունակի ա.պատճառահետևանքային վերլուծություն, բ. ՌԱՄԱ միջոցառումների ցանկ՝ անարդյունավետության նվազեցման, տվյալների վավերացման և ՌԱՄԱ միջոցառումների վերջնական ցուցակի ընտրության համար, գ. ընտրված ՌԱՄԱ միջոցառումների տեխնիկական, տնտեսական և բնապահպանական իրագործելիության գնահատում:

ՌԱՄԱ յուրաքանչյուր գնահատական կնպաստի ձեռնարկություններում կարողությունների հաստատմանը՝ ՌԱՄԱ- ն ընդունելով որպես բիզնեսի աճի անհրաժեշտ ռազմավարություն, և կիրականացվի գնահատման գործողությունների ընթացքում ՌԱՄԱ փորձագետների և ընկերության ՌԱՄԱ թիմի միջև փոխանակման միջոցով:

ԱԻԳ խորհրդատվական խումբը ՌԱՄԱ փորձագետներին ՓՄՁ-ների գնահատման ընթացքում կտրամադրի մարզում-դասընթացներ ՌԱՄԱ մեթոդաբանության և հմույունների վերաբերյալ, կկառավարի ընդհանուր պլանավորումը, ՌԱՄԱ փորձագետներին/ձեռնարկություններին կտրամադրի մասնագիտական առարկաների վերաբերյալ տեխնիկական խորհրդատվություն՝ ապահովելով էներգախնայողության և ոլորտային փորձաքննության համադրությունը:

## 2.1 Մարզչական ծրագրի տրամադրման փուլեր

Ուսուցման մեթոդիկան բաղկացած է երկու մակարդակի օժանդակությունից, որոնք իրենց հերթին կոչված են համակարգված գործընթաց ապահովելու՝ ինչպես տեղական փորձագետների, այնպես էլ ընկերության աշխատակիցների կարողությունների զարգացման համար: **Առաջին մակարդակը** ուղղված է աջակցելու ՌԱՄԱ փորձագետներին՝ ձեռք բերելու ավելի մեծ փորձ ներգործարանային ՌԱՄԱ գնահատումների իրականացման համար, և ընտրված առաջատար ձեռնարկություններին՝ ռեսուրսների արդյունավետության իրականացման գործում: ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության կողմից աջակցվող ԱԻԳ-ի խորհրդատուները կտրամադրեն մեթոդոլոգիական աջակցություն և տեխնիկական խորհրդատվություն այդ փորձագետներին իրենց գործունեության ընթացքում: **Երկրորդ մակարդակը** տեղական փորձագետներին մանրկրկիտ աշխատանքն է, որոնք իրականացնում են ՌԱՄԱ գնահատումներ և ստեղծում են կարողություններ ձեռնարկության աշխատակազմում: Այս գործընթացը զարգանալու է հետևյալ փուլերով.

- **Հնարավոր ձեռնարկությունների նախնական քարտեզագրում.** Մարզչական ծրագիրը կընդգրկի **Շիրակի, Արարատի, Գեղարքունիքի և Երևանի 4 տարածքներ**, որտեղ նախնական քարտեզագրումն արդեն արվել է առկա տվյալների, արդյունաբերության առկայության և բացահայտված արդյունաբերությունների հիման վրա: Կազմվել է 18 ընկերությունների ցանկ հետևելով ոլորտի առաջնահերթություններին: Տես 3-րդ գլխում:
- **Նախապատրաստական դասընթացներ ՌԱՄԱ փորձագետների հետ:** Հավաքագրվելու են 10 մասնագետներ, որպես ընկերություններում արտադրական աշխատանքների փորձաքննություն իրականացնելու տեխնիկական խորհրդատուներ: Խումբը կկազմվի արդյունաբերության ոլորտի ծառայություններ մատուցելու նախկին փորձ ունեցող մասնագետներից: Հետևաբար, նախապատրաստական դասընթացները (4 կեսօրյա սեմինարներ) կանցկացվեն, որպեսզի համասեռ դարձնեն գիտելիքները և գնահատման համար օգտագործվող մեթոդաբանությունը:
- **ՌԱՄԱ ներգործարանային գնահատում ցուցադրական ընկերություններում.**
  - **Առաջին փուլ.** Այն կներառի ՌԱՄԱ հիմնական հայեցակարգերի վերաբերյալ ներկայացում և ապա մարզում:
  - **Երկրորդ փուլ.** Այս փուլի ընթացքում, ԱԻԳ-ի խորհրդատուները (մարզիչները) կշարունակեն ՌԱՄԱ փորձագետների մարզում-դասընթացները ՓՄՁ-ների գնահատման ցիկլին զուգահեռ: Այս փուլը ընդգրկելու է ցուցադրական արդյունաբերության թիրախավորումը և ՌԱՄԱ փորձագետների հետագա հանձնարարականը՝ յուրաքանչյուր ձեռնարկության համար գնահատման առաջադրանքները մշակելու համար: Մարզիչները կուղեկցեն այս գործընթացը կատարելով 5 այցեր 5 վայրերում, ներառելով ցուցադրական ընկերություններ:
  - **Երրորդ փուլ.** Այն ընդգրկելու է մարզում-դասընթացների ավարտական դասերը հինգ վայրերում՝ ընդգրկելով ՌԱՄԱ մեթոդաբանությունից դուրս առարկաներ՝ տեղական մասնագետների և ընկերությունների կարողությունների կայացմանը լրացնելու համար, ինչը թույլ կտա նրանց շարունակել աշխատել արտադրության ավելի կայուն մոդելների համար: ԱԻԳ-ի մարզիչները ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության ուղղորդմամբ կորոշեն 3 առաջադեմ ՌԱՄԱ թեմաները (նվազագույնը 3 ոլորտներում) լրացնելու համար ՌԱՄԱ հիմնական թեմաները՝ պահպանելով բովանդակության համարժեք հավասարակշռությունը, որն անհրաժեշտ է որակյալ գնահատումների համար:

Ընդհանուր առմամբ, ԱԻԳ-ի մարզիչները կտրամադրեն 12 սեմինար, ներառյալ նախնական չորս դասընթացները ՌԱՄԱ փորձագետների համար, իսկ մնացածը, քանի որ ցուցադրական ընկերություններում գնահատականները շարունակվում են:

Ցուցադրական ձեռնարկություններում ՌԱՄԱ փորձագետների կողմից անցկացվող գնահատման ցիկլի ընթացքում ՌԱՄԱ փորձագետները ընկերության աշխատակազմի հետ իրականացնելու են կարողությունների զարգացման գործընթաց: Հետևելու են հետևյալ ռազմավարություններին.

- **Ձեռնարկության թիմերի ղեկավարների վերապատրաստում.** Ձեռնարկության ներկայացուցիչները, որպես ընտրված ՌԱՄԱ թիմ, մասնակցում են ՌԱՄԱ փորձագետների կողմից անցկացվող դասընթացներին, որոնք ընդգրկում են ՌԱՄԱ հասկացությունները, պրակտիկան և մեթոդական մոտեցումը:

Այս սեմինարների միջոցով ձեռնարկությունները ստանում են հիմնական գիտելիքներին և ՌԱՄԱ գնահատման գործընթացին օժանդակելու/անցկացնելու համար, որին այս դեպքում աջակցում են փորձագետները:

Ներքին ընկերությունների վերապատրաստման դասընթացներին կհետևեն ՌԱՄԱ ակումբների նյութի հարմարեցված տարբերակը, որը նախատեսված է «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» համար: Տե՛ս IV գլուխ:

- **Մասնագետների միջոցով հատուկ տեխնիկական աջակցություն.** յուրաքանչյուր ձեռնարկությանը աջակցում է տեխնիկական խորհրդատվական թիմը, որը բաղկացած է յուրաքանչյուր ընկերության 1-2 փորձագետներից: Հատուկ ոլորտային փորձաքննություններ կարող են ավելացվել առանձին-առանձին հիմունքներով հատուկ առարկաների համար, որոնք կարող են առաջանալ ներգործարանային գնահատման ընթացքում:

Գնահատումների ընթացքում հիմնական գործունեությունը **ՌԱՄԱ փորձագետների կողմից տրամադրվելիք տեխնիկական օժանդակությունն է**, որը կանցկացնի գնահատումը և կպատրաստի ընկերության թիմի մասնակցությանը՝ առավելագույնի հասցնելու համար հզորացումը, որակի արդյունքները և իրագործելի գործողությունների պլանների ստեղծումը, որոնք կարող են իրականացվել ընկերության կողմից:

### III. Թիրախային ոլորտները և հավանական ձեռնարկությունները

«ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ՌԱՄԱ բաղադրիչի շրջանակներում հնարավոր ՌԱՄԱ գնահատման համար ընտրվել են արդյունաբերության հետևյալ ոլորտները.

- Պլաստիկի արտադրություն
- Ձկնարդյունաբերություն
- Մնուկ և գյուղատնտեսական վերամշակում
- Մետաղի վերամշակում
- Քիմիական արտադրություն
- Վերամշակում / թափոններ
- Տեքստիլ

Ծրագրի մշակման ընթացքում պլաստիկի և ձկնարտադրությունը նույնականացվել են ՀՀ Կառավարության կողմից, որին առաջնահերթություն է տրվել «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագրի Աշխատանքային Պլանում 2019 թվականին: Ցուցադրական ձեռնարկությունների ներկայիս ցուցակը ընդգրկում է երկու ոլորտների ՓՄՁ-ները (պլաստիկ իրերի արտադրողներ, ընկերություններ՝ «Պրոպեր Պլաստիկ» (պլաստիկի վերամշակում, HDPE/02 պլաստիկե կայուն դիզայնով արտադրանքներ), «ԱրմՊալստ»ՍՊԸ (գրադվում է HDPE, PP, PS, LDPE պլաստիկի և պոլիէթիլենի վերամշակմամբ), «Քլինլանդ»ՍՊԸ(վերամշակում է PET պլաստիկե շշեր), «Արմենիապլաստ» ընկերություն (Պոլիէթիլենային տոպրակների և տարաների արտադրություն) և «Օլիմպեքսպո» (պոլիէթիլենային պայուսակների/պոլիէթիլենի արտադրություն): Կա երկու ընկերություն, որոնք ներկայացնում են խառը՝ թղթի և պլաստմասե իրերի, արտադրություն ու թափոնների թղթի վերամշակում. «Վազգեն Աբգարյան» ՍՊԸ և մեկ այլ ընկերություն, որը արտադրում է և պլաստիկ պայուսակներ, ինքնաստսնձվող ժապավեններ, անձեռոցիկներ՝ «Սկարլետ» ՍՊԸ-ն:

Հետևելով Կառավարության երկրորդ գերակա ոլորտի ներառմանը՝ **Ձկնարտադրության ոլորտից** երկու տարբեր մարզերից ընտրված են երկու ընկերություններ, «Խայծ Իշխան»ՍՊԸ (ձկնաբուծարան, խավիարի արտադրություն և արտահանում) և «Սևանի Իշխան» (Գեղարքունի և ամառային իշխանի ենթատեսակների վերամշակում և վաճառք, ձկնաբուծական արտադրանքի լայն տեսականու՝ թարմ, սառեցված ձուկ, պահածոյացված ձուկ, արտադրություն):

Բացի վերոհիշյալ ոլորտներից՝ նախագիծը ընտրել է նաև Գյումրու (Շիրակի մարզ) համար արդյունաբերական նշանակալի տնտեսական և արդյունաբերական ներուժ ունեցող տեքստիլ արտադրությունը:

**Մանդի և գյուղատնտեսական վերամշակումը** տնտեսական զարգացման տեսանկյունից եղել են ամենահեռանկարային տնտեսական ներուժերից մեկը և լավ ներուժ ունեն «Օրգանական թափոնների (կենսազագ, վառելիք, ըստ արտադրանքների) վերականգնում և վերամշակում, ստերիլիզացում և պաստերիիզացում, համակենսորոնացում, մաքրում, CIP, ինչպես նաև խնայողություններ ջրային և էներգետիկայի ոլորտներում», համաձայն «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագրի «Ոլորտները և վերապատրաստման թեմաները, առաջին նախագիծը. ՀԱՅԱՍՏԱՆ» Տեխնիկական զեկույցի առաջարկության: Նույն Տեխնիկական զեկույցի առաջարկով մետաղի վերամշակումը ևս ընդգրկվել է ՓՄՁ-ների ցանկում («Մագնոն» ԲԲԸ, Մետաղական արտադրատեսակների արտադրություն) և «Թուրվանդ» ՍՊԸ-ն (մետաղապլաստե արտադրանքի արտադրություն):

**Ցուցակը հարստացվում է այլ ընկերություններով, որոնք ներկայացնում են քիմիական և պլաստիկ արտադրության արդյունաբերությունների լավ խառնուրդ, որն առաջարկվում է Տեխնիկական զեկույցով, և լավ ներուժ ունի ՌԱՄԱ տեսանկյունից, այդպիսիք են «Ամեսկա» անվադողերի վերամշակման ընկերությունը (վերամշակում որը արդյունք է տեխնիկական ածխածնի, դիզելային վառելիքի և մետաղի ջարդոնի): Ընկերությունը հետաքրքրական է նաև արտադրանքի շնորհիվ, ինչպիսիք են օգտագործված յուղերի, պլաստիկ թափոնների, պայուսակների, բեռնարկերի (պոլիէթիլենային), քարթրիջների, ֆայլերի և այլ պինդ գրասենյակային թափոնների, պաստառների (պոլիպրոպիլեն), կենցաղային տեխնիկայի (պոլիստիրոլ) վերամշակումը:**

Ծրագիրն ուղղված է այն շրջաններին, որտեղ նախորդ ծրագրի ընթացքում ՌԱՄԱ ցուցադրություն չի անցկացվել. Դրանք են Շիրակը, Գեղարքունիքը, Կոտայքը և Երևանը:

#### IV. Մարզում-դասընթացներ

#### 4.1 ՌԱՄԱթեմաները, որոնք ընդգրկված են մարզական ծրագրում

Դասընթացների մեթոդիկան՝ որպես գնահատման կիզակետ ձեռնարկության մակարդակում, հիմնված է հետևյալ սկզբունքների վրա.

##### 1. ՌԱՄԱ իրականացման հինգ ընդհանուր ունիվերսալ մեթոդներում ներառված են.

- Կառավարում և աշխատանք. Կենցաղային պրակտիկայի կատարելագործում,
- Թափոնների կրճատում,
- Հումքի փոխարինում,
- Նոր տեխնոլոգիաներ,
- Արտադրանքի նոր ձևավորում:

##### 2. Վերականգնվող էներգիայի աղբյուրների անցման վրա հիմնվելով՝ շրջանաձև մոդելը ստեղծում է տնտեսական, բնական և սոցիալական կապիտալ: Այն հիմնված է երեք սկզբունքների վրա.

- Աղբի ու աղտոտման նախագծում,
- Արտադրանքի ու նյութերի պահպանում օգտագործման մեջ,
- Բնական համակարգերի վերականգնում:

#### 4.2 Նախապատրաստական սեմինարներ ՌԱՄԱ փորձագետների հետ

RECP գնահատման մեթոդաբանության դասընթացներն ու մարզումները հետևելու են RECP ուսուցման հիմնական գործիքակազմի ընդհանուր կառուցվածքին (տե՛ս հավելված 1-ի հղման բովանդակությունը): Հիմնական տեղեկատվական նյութերը և մարզիչների գրառումները դասընթացի համար օգտակար գործիքներ են դասընթացների ընթացքում կամ ձեռնարկության մակարդակում տեխնիկական օժանդակության համար:









Փորձագետի գրառումները և նախապատմական նյութերը հիմնված են այն երկարամյա փորձի վրա, որը ձեռք են բերել ՌԱՄԱ փորձագետները՝ տարբեր արդյունաբերական ոլորտներում ՌԱՄԱ/ՄԱ այլ նախագծերի իրականացման ընթացքում:

Դասընթացի մոդուլները հետևյալն են.

- **Մոդուլ 1.** Միջազգային և ազգային իրավիճակ
- **Մոդուլ 2.** Ներածություն՝ ՌԱՄԱ – ՄԱ հիմունքներ, Էկո-դիզայն/Կենսական բոլորաշրջանի վերլուծություն
- **Մոդուլ 3.** Թիմ, քաղաքականություն, մոտիվացիա
- **Module 4.** Նյութերի հոսքի վերլուծություն
- **Module 5.** Էներգիայի հոսքի վերլուծություն
- **Module 6.** Նորարարություն, ստեղծարարություն և տարբերակների ստեղծում
- **Module 7.** Քիմիական և վտանգավոր նյութեր
- **Module 8.** Ինդիկատորներն շրջակա միջավայրի վերահսկողություն
- **Module 9.** Թափոնների կառավարում և վերամշակում
- **Module 10.** Ռամա աուդիտներ և վերջնական հաշվետվություններ
- **Module 11.** ՌԱՄԱ-ից մինչև ԲԿՀ (Բնապահպանական կառավարման համակարգեր) և Մաքուր շրջակա միջավայր

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս չորս նախապատրաստական դասընթացների նախնական օրակարգը: Դասընթացները կանցկացվեն մեկ ամսվա ընթացքում՝ մինչ ձեռնարկություններում ցուցադրական գնահատումները սկսելը:

Աղյուսակ 1. ՌԱՄԱ փորձագետների նախապատրաստական դասընթացների նախնական օրակարգ

Օր	1-կես օր	2- կես օր	3- կես օր	4- կես օր	
Ժամ	9:00	Գրանցում	Գրանցում	Գրանցում	
	9:30	Ողջունի խոսք, Մասնակիցների և ծրագրի ներկայացում  <b>Մոդուլ 1.</b> Միջազգային և ազգային իրավիճակ	<b>Մոդուլ 4.</b> Նյութերի հոսքի վերլուծություն	Վարժություն 4 (շարունակություն-պլենար նիստ)	<b>Մոդուլ 10.</b> Ռամա աուդիտներ և վերջնական հաշվետվություններ
	10:30				
	10:45	<b>Մոդուլ 2.</b> Ներածություն՝ ՌԱՄԱ – ՄԱ հիմունքներ, Էկո-դիզայն / Կյանքի ցիկլի վերլուծություն	Վարժություն 3	Վարժություն 5	<b>Մոդուլ 10.</b> (շարունակություն)
	11:15		<b>Մոդուլ 5.</b> Էներգիայի հոսքի վերլուծություն	<b>Մոդուլ 7.</b> Քիմիական և վտանգավոր նյութեր	
	12:00	Վարժություն 1			Ծրագրի աշխատանքային պլանի վերանայում գնահատումների մշակման համար
	12:30				
	13:00	<b>Մոդուլ 3.</b> Թիմ, քաղաքականություն, մոտիվացիա	<b>Մոդուլ 6.</b> Նորարարություն, ստեղծագործականություն և տարբերակների ստեղծում	<b>Մոդուլ 8.</b> Ինդիկատորներն շրջակա միջավայրի վերահսկողություն	Մարզչական նյութի վերանայում ներգործարանային հանդիպումների և հաշվետվության ձևանմուշի համար
	13:30 - 14:00	Վարժություն 2	Վարժություն 4	<b>Մոդուլ 9.</b> Թափոնների կառավարում և վերամշակում	

#### 4.3 Մարզում-դասընթացներ ձեռնարկությունների համար

Ձեռնարկությունների հետ աշխատանքի առաջին փուլը կներառի ՌԱՄԱ հիմնական հայեցակարգերի ներկայացում և մարզում (2 այց 10 մասնագետների և ՓՄՁ 15 ներկայացուցիչների համար): Երկրորդ փուլում կշարունակվի մարզչական ծրագիրը ՓՄՁ գնահատման ցիկլին զուգահեռ, որի ընթացքում ԱԲԳ մարզիչները կուղեկցեն 5 վայրում և 5 այցերով՝ 15 ցուցադրական ձեռնարկություններում: Այս փուլի ընթացքում ՌԱՄԱ փորձագետները կմարզեն ձեռնարկությունների աշխատակիցներին ըստ «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագրի ՌԱՄԱ Ակումբների նորացված մեթոդաբանության՝ ձեռնարկությունների թիմերին ներգրավելով գնահատման գործընթացում և նույնականացնելով բարելավման միջոցառումները:

Համաձայն ՌԱՄԱ Ակումբների մոդելի, ՓՄՁ-ների համար ՌԱՄԱ ուսուցման ծրագիրը հիմնված է մոդուլային մոտեցման վրա: Վերապատրաստման վեց մոդուլներ մշակվել են ՌԱՄԱ գնահատման հայեցակարգերն ու քայլերը աստիճանաբար փոխանցելու համար ([http://recp.am/wp-content/uploads/2017/02/Workbook\\_update\\_2016.pdf](http://recp.am/wp-content/uploads/2017/02/Workbook_update_2016.pdf)): Յուրաքանչյուր մոդուլ կտրամադրվի 3-4 ժամ տևողությամբ սեմինարի միջոցով, մասնակիցներին ծանոթացնելու համար ՌԱՄԱ մեթոդաբանության առնվազն մեկ թեմայի, ուսումնասիրելու հատուկ թեմայի ռեսուրսների հետ կապված նրանց կարիքները և տրամադրել ուղեցույցներ բարելավման հնարավորությունները պարզելու համար: Յուրաքանչյուր սեմինար ավարտվում է անդամ ձեռնարկությունների համար գործնական խորհուրդներով: Նախատեսվում է, որ սեմինարներն անցկացվելու են 4-6 ամսվա ընթացքում: Յուրաքանչյուր հանդիպումից հետո ձեռնարկությունները ստանում են անհատական ուսումնասիրություն, իսկ հաջորդին՝ զեկոուցում են իրենց փորձի մասին, ինչը նպաստում է հավաքական ուսուցմանը: Յուրաքանչյուր հանդիպմանը լուսաբանվում է նոր թեմա:

Վերապատրաստման յուրաքանչյուր մոդուլում սովորողները ստանում են առաջադրանքների ցանկ, որոնք պետք է մշակվեն առաջիկա հանդիպումից առաջ մոտավորապես երկու - չորս շաբաթվա ընթացքում: Նպատակն է ինքնագնահատման միջոցով կիրառել ուսուցման մեթոդներ, որոնք իրականացվում են ձեռնարկությունների մարզիչների կողմից՝ ընտրված թեմայի բարելավման հնարավորությունները բացահայտելու համար: Որպես մարզչական նյութերի մաս կազմվել է ինքնագնահատման Excel գործիք, որը պարունակում է ուղեցույցներ ռեսուրսների արդյունավետության համակարգված վերլուծության համար, ինչը կօգտագործվի մարզիչների կողմից իրենց ձեռնարկություններում:







ՌԱՄԱ Փորձագետները կուղեկցեն վերապատրաստման մոդուլները տեղական աշխատանքային սեմինարների միջոցով, ինչպես նաև կտրամադրեն մարզչական այցեր ձեռնարկություններ՝ ինքնագնահատման առաջադրանքներն օժանդակելու համար (2-3 այց մեկ ձեռնարկություն): ՌԱՄԱ փորձագետը պետք է մարզի և տրամադրի տեխնիկական աջակցություն՝ ՌԱՄԱ տարբերակների գնահատման համար, որպեսզի յուրաքանչյուր ձեռնարկությունում գնահատման ցիկլի ավարտին ունենա ՌԱՄԱ գործողությունների ծրագիր:

Դասընթացի ավարտից հետո յուրաքանչյուր անդամ ձեռնարկություն կմշակի գործող ՌԱՄԱ գործողությունների պլան և կսկսի դրա իրականացումը: 2-րդ և 3-րդ աղյուսակները ցույց են տալիս ընդհանուր դասացուցակը և դասընթացների մոդուլների նկարագրությունը, ինչպես նախատեսված է վերապատրաստման ծրագրով: Որոշ ճշգրտումներ կարող են կատարվել ուղրտում արդյունավետ այցեր կազմակերպելու ճանապարհին:



Աղյուսակ 2. ՌԱՄԱ դասընթացների ծրագրի օրակարգը ցուցադրական ձեռնարկությունների համար

[http://recp.am/wp-content/uploads/2017/02/Workbook\\_update\\_2016.pdf](http://recp.am/wp-content/uploads/2017/02/Workbook_update_2016.pdf)

Օր	1	2	3	4	5	6	
Ժամ	9:00	Գրանցում Առաջին հանդիպումը մարզերում	Գրանցում Երկրորդ հանդիպումը մարզերում	Գրանցում Երրորդ հանդիպումը մարզերում	Գրանցում Չորրորդ հանդիպումը մարզերում	Գրանցում Հինգերորդ հանդիպումը մարզերում	Գրանցում Վեցերորդ հանդիպումը մարզերում
	9:30	Ողջույին խոսք, Մասնակիցների ներկայացում, Մոդուլ 1 «Բիզնեսի բնապահպանական պրոֆիլ»	Ողջույին խոսք, Մասնակիցների ներկայացում, Մոդուլ 2 «Էներգիա»	Ողջույին խոսք, Մասնակիցների ներկայացում, Մոդուլ 3 «Ջրի արդյունավետություն և թափոնաջրերի կրճատում»	Ողջույին խոսք, Մասնակիցների ներկայացում, Մոդուլ 4 «Նյութական արդյունավետություն և թափոնների նվազեցում	Ողջույին խոսք, Մասնակիցների ներկայացում, Մոդուլ 5 «Քիմիական նյութեր, վտանգավոր թափոններ և արտանետումներ»	Ողջույին խոսք, Մասնակիցների ներկայացում, Մոդուլ 6 «Գործողությունների պլան»
	10:30						
	11:00	Վարժություն 1. Աշխ. թերթիկ #1 «Պրոֆիլ»	Վարժություն 2. Աշխ. թերթիկ #2 «Էներգիա»	Վարժություն 3.	Վարժություն 4.	Վարժություն 5.	Վարժություն 6. Աշխ. թերթիկ #6 «Գործողությունների պլան»
	14:30	Հարց Պատասպան Քննարկում	Հարց Պատասպան Քննարկում	Հարց Պատասպան Քննարկում	Հարց Պատասպան Քննարկում	Հարց Պատասպան Քննարկում	Հարց Պատասպան Քննարկում


Աղյուսակ 3. ՓՄՁ ներկայացուցիչների համար ՌԱՄԱ դասընթացի ծրագրի Մոդուլների նկարագրությունը (ըստ ՌԱՄԱ փորձագետների) – Ավելի լավ բիզնես – Ավելի մաքուր շրջակա միջավայր – Կանաչ տնտեսություն [http://recp.am/wp-content/uploads/2017/02/Workbook\\_update\\_2016.pdf](http://recp.am/wp-content/uploads/2017/02/Workbook_update_2016.pdf)

Մոդուլի թեման	Մոդուլի բովանդակության նկարագիրը
<p><b>Մոդուլ 1. Բիզնեսի բնապահպանական պրոֆիլ-Ձեռնարկության պրոֆիլավորում՝ կենտրոնանալով ռեսուրսների օգտագործման և շրջակա միջավայրի վրա ազդեցության բացահայտման վրա՝ գնահատելով դրանց ինչպես ֆիզիկական միավորները (տոննա, կՎտժ և այլն), այնպես էլ դրամական արժեքը (մուտքային ծախսերը և արտադրանքի ելքային ծախսերը):</b></p>	<p>Աշխ. թերթիկ #1 «Պրոֆիլ», Ներածական մաս. «Ընդհանուր տեղեկություններ» Այս բաժնում ներկայացված են ընկերության ելակետային պրոֆիլի և տվյալների հավաքման հիմքերը: Հիմք ընդունելով նյութերի ֆիզիկական քանակությունների, տնտեսական արժեքի և դրա շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական վերլուծությունը, սահմանվում են բնապահպանական հիմնական գերակայությունները: Ընկերության մակարդակով տվյալների հավաքագրումը այս փուլի հիմնական կետն է, և այն կօգտագործվի որպես հղում էներգիայի, ջրի և կեղտաջրերի, նյութերի և թափոնների, քիմիական նյութերի և վտանգավոր թափոնների հաջորդ ինքնագնահատման աշխատանքային թերթիկների համար:</p> <p><b>Վարժություն 1.</b></p>
<p><b>Մոդուլ 2. Էներգիա –</b> շահանալ ձեռնարկությունում</p>	<p>Աշխ. թերթիկ #2 «Էներգիա»: Տարբեր տեսակի</p>

<p>էներգիայի օգտագործումը և մշակել գործընթացների, կոմունալ համակարգերի և շենքերի կառավարման համար էներգասարքյունավետության տարբերակներ:</p>	<p>ռեսուրսներ օգտագործողների (գործընթացներ, գործողություններ և այլն) քարտեզագրում ու քանակական գնահատում, և համեմատում դրանց տեսական սպառումը իրական սպառման հետ: <b>Վարժություն 2.</b></p>
<p><b>Մոդուլ 3. «Ջրի արդյունավետություն և թափոնաջրերի կրճատում»</b>- Հասկանալ ձեռնարկության և հարակից կեղտաջրերի հոսքերի հիմնական հոսքերը և զարգացնել ջրի արդյունավետության և արտանետումների նվազեցման տարբերակները:</p>	<p><b>Աշխ. թերթիկ # 3</b> Տարբեր ռեսուրսներ սպառողների (գործընթացներ, գործողություններ և այլն) քարտեզագրում և քանակական գնահատում, ու համեմատում դրանց տեսական սպառումը իրական սպառման հետ: <b>Վարժություն 3.</b></p>
<p><b>Մոդուլ 4. «Նյութական արդյունավետություն և թափոնների նվազեցում»</b> - Հասկանալ ձեռնարկության նյութական հոսքերը և դրանց առնչվող թափոնների հոսքերը, և զարգացնել նյութերի արդյունավետության և թափոնների նվազեցման տարբերակները:</p>	<p><b>Աշխ. թերթիկ # 4</b> Արտահոսքի աղբյուրների, թափոնների և արտանետումների, ու դրանց առաջացման վրա ազդող գործոնների քարտեզագրում և քանակական գնահատում: <b>Վարժություն 4.</b></p>
<p><b>Մոդուլ 5. «Քիմիական նյութեր, վտանգավոր թափոններ և արտանետումներ»</b>- Հասկանալ քիմիական նյութերի սպառումը և դրանց առնչվող վտանգներն ու արտանետումները, ինչպես նաև մշակել ձայնի և համապատասխան քիմիական նյութերի օգտագործման տարբերակներ:</p>	<p><b>Աշխ. թերթիկ # 5</b> Ռեսուրսների ընդհանուր օգտագործում (ներդրում) և թափոնների ու արտանետումների ընդհանուր արտադրություն (ոչ արտադրողական արտադրանք). տվյալները փոխանցվում են 1-ին մասից «Բնապահպանական պրոֆիլ»-ից, (տեսակը, ֆիզիկական միավորը, տարեկան ֆիզիկական սպառումը, տարեկան արժեքը, թափոնների և արտանետումների հիմնական սպառումները և ստեղծման հիմնական աղբյուրները): <b>Վարժություն 5.</b></p>
<p><b>Մոդուլ 6. Գործողությունների ծրագիր</b>- Ինտեգրված մոտեցման մեջ տարբեր թեմաներից տարբերակների համախմբում՝ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ նպատակներով ու գործողություններով ձեռնարկությունների համար:</p>	<p><b>Աշխ. թերթիկ #6 «Գործողությունների պլան»</b> ՌԱՄԱ տարբերակների կատալոգի հիմնական սկզբունքները և ՌԱՄԱ յուրաքանչյուր տարբերակի հետ կապված առաջադրանքների կատեգորիաները, ինչպես նաև դրանց տնտեսական և բնապահպանական առավելությունները, իրականացման վերջնաժամկետները և պատասխանատու անձինք: <b>Վարժություն 6.</b></p>

## V. Կազմակերպության կառուցվածքը

Ծրագրի թիմն ունի հետևյալ կազմակերպչական կառուցվածքը՝ նախորդ գլուխներում նկարագրված ռազմավարության համաձայն .



Նկար 1. Կազմակերպչական կառուցվածք

Ձեռնարկություններում ՌԱՄԱ գնահատման ցիկլի պլանավորումը և կազմակերպչական գործընթացը ներառում է հետևյալ քայլերը.

- Ձեռնարկության նախագծային թիմի կազմակերպում (ձեռնարկության ՌԱՄԱ թիմ)
- Նախնական այցելություն առաջին գաղափարները հավաքելու համար
- Մշակել գործընթացների սխեմա և բացահայտել մուտքերն ու ելքերը
- Բացահայտել հիմքը: Քանակապես որոշել մուտքերը և ելքերը
- Նախնական գնահատում՝ սահմանելու համար առաջնահերթությունները
- Սահմանել առաջնահերթությունները՝ ըստ թափոնների և արտանետումների ծավալի, ինչպես նաև ռիսկերի
- Մշակել նախնական ծրագիր
- Համապատասխան ոլորտներում մանրամասն գնահատում և տարբերակների ստեղծում
- Տարբերակների գնահատում (տեխնիկական, տնտեսական և բնապահպանական իրագործելիություն) և ծրագիր
- Գործողությունների պլան
- Իրականացում

ԱԻԳ-ը այս ընդհանուր ցիկլից հետո 15 նոր ցուցադրական ձեռնարկություններում իրականացնելու է ՌԱՄԱ գնահատումներ: Նոր փորձագետները կաշխատեն EaP Green- ի փորձագետների և ԱԻԳ տեխնիկական խորհրդատուների թիմում՝ ինչպես կարողությունների զարգացման, այնպես էլ ՌԱՄԱ գնահատման բաղադրիչների ուղղությամբ: Նրանք նաև կհամագործակցեն Մոնիտորինգի գլխավոր նախագծի մշակման գործում, կմասնակցեն և կներկայացնեն իրենց բիզնես դեպքերը ծրագրի միջոցառումների, ՌԱՄԱ ազգային գիտաժողովների, շրջանավարտների միջոցառումների և այլնի ընթացքում:

ՌԱՄԱ փորձագետները պետք է պատրաստեն հետևյալ հաշվետվությունները յուրաքանչյուր ձեռնարկության համար.

- Ձեռնարկության թիմի հետ համաձայնեցված հատուկ աշխատանքային պլան՝ վերապատրաստման դասընթացներ և այցել իրականացնելու համար:
- ՌԱՄԱ գնահատման ընթացիկ հաշվետվություն (ըստ ԱԻԳ-ի տեխնիկական առաջադրանքի 2.6 և D2.6 գործողության):

- ՌԱՄԱ գնահատման վերջնական հաշվետվություն, ներառյալ գնահատման արդյունքները, ՌԱՄԱ միջոցառումների խնայողական կատալոգը, գործողությունների պլանը (համաձայն ԱԻԳ-ի տեխնիկական առաջադրանքի 2.6, 2.7 և D2.7 գործողությունների):

ՌԱՄԱ գնահատումների ավարտից հետո, երբ ձեռնարկությունները կունենան իրենց ՌԱՄԱ գնահատման զեկույցը և գործողությունների պլանը, կսկսվի մոնիտորինգի փուլը: Կկազմվի մոնիտորինգի պլան, և կիրականացվեն մոնիտորինգային այցեր բոլոր ձեռնարկություններ (Գործողություն 2.8, և D2.8, D2.9) գնահատելու և գրանցելու համար ՌԱՄԱ իրականացման արդյունքները:


Ֆինանսական կարիքները սահմանելուն աջակցելու համար ընկերություններում ՌԱՄԱ թիմերին կողորդողի Բիզնեսի և ֆինանսների զարգացման փորձագետը: Դա կազմակերպվի առնվազն 10 ձեռնարկությունների համար, որոնք հետաքրքրություն կցուցաբերեն իրականացնել ՌԱՄԱ միջոցառումներ իրենց սեփական և փոխառնված միջոցների օգտագործմամբ (Գործողություն 2.9): Այս խնդիրը պետք է ներառի ֆինանսավորման աղբյուրների որոշում, ինչպես նաև աջակցություն ֆինանսական հաստատություններին վարկային հայտերի պատրաստման գործընթացում՝ **ըստ ձեռնարկության պահանջի:**

## VI. Ժամանակացույց


Մարզչական ծրագիրը՝ ՌԱՄԱ փորձագիտական թիմի ձևավորումից մինչև ՌԱՄԱ գնահատումների և գործողությունների ծրագրի վերջնական հաստատումը, նախատեսվում է 8-ամսյա ժամկետով: Հետևյալ գծապատկերները ցույց են տալիս նկարագրված գործողությունների հաջորդականությունը: COVID19 իրավիճակի պատճառով ընկերություններում ՌԱՄԱ գնահատման ցիկլի հատուկ սկզբնաժամկետը (նկ. 2) կհաստատվի հաշվի առնելով տեղաշարժման սահմանափակումները և ընկերությունների հասանելիությունը:

Նկար 2. Մարզչական ծրագրի ընդհանուր ժամանակացույցը

(ճշգրտվում է COVID19 իրավիճակը հաշվի առնելով)




Նկար 2. Գանտի դիագրամ նախապատրաստական փուլի համար<sup>1</sup>



Նկար 3. Գանտի նախնական աղյուսակը՝ ձեռնարկություններում ՌԱՄԱ գնահատման ցիկլի համար նախատեսված<sup>2</sup>

<sup>1</sup> Գծապատկերում ներկայացված են ծրագրի առաջադրանքների ընդհանուր տևողությունը: Բոլոր գործողությունների տևողությունները կկարգավորվեն համաձայն COVID19 իրավիճակի:

<sup>2</sup> Աղյուսակում ներկայացված են ծրագրի առաջադրանքների ընդհանուր տևողությունը: Բոլոր գործողությունների տևողությունները կկարգավորվեն համաձայն COVID19 իրավիճակի:



## VII. Հավելվածներ.

### Հավելված 1. Հիմնական ՌԱՄԱ վերապատրաստման/մարզչական ծրագրի բովանդակությունը<sup>3</sup>

1. **Միջազգային և ազգային իրավիճակ:** գլոբալ բնապահպանական խնդիրներ, ներդրումներ արդյունաբերությունից, շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկ՝ ազգային արդյունաբերությունից:

#### 2. ՌԱՄԱ Ներածություն

- Սահմանումներ (թափոններ, արտանետումներ և այլն),
- Բնապահպանական ավանդական կառավարումն ընդդեմ ավելի ամբողջական մոտեցման,
- Հումքի, արտադրական գործընթացի և թափոնների/արտանետումների միջնփոխհարաբերություններ,
- Թափոնների և արտանետումների արտադրության վրա ազդող գործոններ (որտեղից սկսել),
- Տվյալների հավաքագրումը՝ որպես թափոնները և արտանետումները նվազագույնի հասցնելու հիմք:

#### 3. Թիմ, քաղաքականություն, մոտիվացիա

- Հակափաստարկներին խոչընդոտների կանխատեսում,
- Բնապահպանական աշխատանքային խմբի ստեղծման պատճառները, շրջակա միջավայրի ներկայացուցիչը և բնապահպանական խումբ,
- աշխատուժի մոտիվացիա,
- Ստեղծված իրավիճակի նկարագրություն/վերլուծություն. Թույլ կետեր և ուժեղ կետեր բնապահպանական գործունեության առումով,
- Մաքուր արտադրություն. ձայնային հիմք ԲԿՀ ի համար,
- Բնապահպանական քաղաքականության սահմանում:

#### 4. Նյութերի հոսքի վերլուծություն

- Ի՞նչ է նյութի հոսքի վերլուծություն,
- Ինչպե՞ս իրականացնել նյութական հոսքի վերլուծություն,
- Դեպքերի ուսումնասիրություններ,
- Ջրի համար նյութի հոսքի վերլուծություն,
- Տվյալների թերթիկների օգտագործում:

#### 5. Էներգիայի վերլուծություն

- Կորպորատիվ էներգետիկ համակարգի հիմնական բաղադրիչներ
- Տվյալների հավաքում և էներգախնայողություն ներուժ
- Էներգիայի տվյալներ - Հատուկ էներգիայի սպառում - հենանիշեր
- Ինչպե՞ս մեկնաբանել շաբաթական / ամենօրյա վիճակագրությունը
- Փոխարկումներ
- Բաշխում
- Սպառողներ

<sup>3</sup><https://www.unido.org/resources/publications/safeguarding-environment/industrial-energy-efficiency/cp-toolkit-english>

- Ջերմության վերականգնում
- Օպտիմալացման մեծ ներուժով տիպիկ տարածքներ

#### 6. Նորարարություն, ստեղծարարություն և տարբերակների ստեղծում

- Ստեղծարարության և մտքի գործընթացներ,
- Նորարարություն, ստեղծագործական մեթոդներ և տեխնիկա,
- ՄԱ տարբերակի ստեղծում,
- Գնահատման և իրագործելիության ուսումնասիրություն,
- Տեխնիկական, բնապահպանական և տնտեսական գնահատում:

#### 7. Կանաչ գնումների և վտանգավոր նյութերի ներածություն

- Ձեռնարկություններում կանաչ գնումների ներածություն,
- Վտանգավոր նյութերի ներածություն,
- Կայուն քիմիկատների կառավարման ներածություն :

#### 8. Ինդիկատորներ և շրջակա միջավայրի վերահսկողություն

- Ի՞նչ է նշանակում «շրջակա միջավայրի վերահսկողություն»:
- Բնապահպանական տեղեկատվական համակարգ և ցուցանիշների օգտագործում:
- Շրջակա միջավայրի վերահսկողություն իրականացնող կազմակերպություն:

#### 9. Թափոնների կառավարում

- Թափոնների կառավարման համակարգի վերլուծություն և լոգիստիկայի օպտիմալացում
- Տնտեսական արժեք ունեցող թափոնների վերականգնում
- Կենսագազ
- Ջրային ցիկլերի փակում

#### 10. Աուդիտներ և վերջնական հաշվետվություններ

- Ի՞նչ է ՌԱՄԱ աուդիտը
- Մաքուր արտադրության աուդիտի անցկացում
- Աուդիտի հոգեբանական կողմերը
- Մաքուր արտադրության աուդիտն ընդդեմ նախնական ստուգման և աուդիտը շրջակա միջավայրի կառավարման համակարգում
- Հաշվետվություն

#### 11. ՌԱՄԱ-ից մինչև ԲԿԿ (Բնապահպ. կառ. համակարգեր) և Մաքուր շրջակա միջավայր

- Շրջակա միջավայրի կառավարման համակարգի տարրեր
- Շրջակա միջավայրի նախնական ուսումնասիրություն
- Բնապահպանական քաղաքականություն, բնապահպանական նպատակներ
- Բնապահպանական թիրախների սահմանում և բնապահպանական ծրագրի մշակում
- Փաստաթղթեր

#### Հավելված 2.

#### Նյութեր և ելույթներ

1. «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի - Ռեսուրսների հարյունավետություն և մաքուր արտադրություն (ՌԱՄԱ) ծրագիր»։ ՌԱՄԱ Մարզչական ծրագիր Հայաստանում, Մաս I. Մոդուլներ 1-6:



2. «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի - Ռեսուրսների արդյունավետությունն և մաքուր արտադրություն (ՌԱՄԱ) ծրագիր»: ՌԱՄԱ Մարզյական ծրագիր Հայաստանում, Մաս II. Սողուլներ 7-12:
3. Ռեսուրսների արդյունավետությունն և մաքուր արտադրություն (ՌԱՄԱ) Փոքր ու միջին ձեռնարկությունների համակարգողի ձեռնարկ  
[https://www.dropbox.com/sh/wznkjz3ouekse6q/AADmCYMqZFivbvbV4UoqdNJEa/1.%20Facilitator%20manual?dl=0&preview=20191130+RECP+Club+Facilitators+Manual.docx&subfolder\\_nav\\_tracking=1](https://www.dropbox.com/sh/wznkjz3ouekse6q/AADmCYMqZFivbvbV4UoqdNJEa/1.%20Facilitator%20manual?dl=0&preview=20191130+RECP+Club+Facilitators+Manual.docx&subfolder_nav_tracking=1)
4. Փոքր և միջին ձեռնարկությունների ՌԱՄԱ ակումբները՝ ընդլայնելով ռեսուրսների արդյունավետ և մաքուր արտադրության ECP ձեռնարկը ձեռնարկությունների համար  
[https://www.dropbox.com/sh/wznkjz3ouekse6q/AABP5YDmdnLbUb9NAQj9nSdra/10.%20Enterprise%20manual?dl=0&preview=RECP+Club++Manual+for+Enterprises.docx&subfolder\\_nav\\_tracking=1](https://www.dropbox.com/sh/wznkjz3ouekse6q/AABP5YDmdnLbUb9NAQj9nSdra/10.%20Enterprise%20manual?dl=0&preview=RECP+Club++Manual+for+Enterprises.docx&subfolder_nav_tracking=1)
5. <https://drive.google.com/drive/u/1/folders/1uU9gt0GYoZiLneAAgfUW9cwTpgQ50NuQ>  
 (ՌԱՄԱ փորձագետների Տեխնիկական առաջադրանք).